ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1554-Ա

ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, քանի որ 2011 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան և պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգչի հանդիսանում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով Արթուր Հենրիկի Խաչատրյանի (ծնված՝ 24.10.1965 թ.) դիմումը, հիմք ընդունելով «ԳՈՒՅԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման համաձայնությունը և 2024WMGCG3(25.09.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը՝ ***որոշում եմ***

1.Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Փամբակ համայնք, գյուղ Արջուտ, 9-րդ փողոց, 17/1 բնակելի տուն հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-019-0045-0009 ծածկագրով 0,02409 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանանակության հողամասի և հողամասի վրա կառուցված բնակելի տան և պարիսպի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հաստատվածի:

2. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Փամբակ համայնք, գ. Արջուտ, 9-րդ փողոց, 17/1 բնակելի տուն հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-019-0045-0009 ծածկագրով 0,02409 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանանակության հողամասի և Արթուր Հենրիկի Խաչատրյանի (ծնված՝ 24.10.1965 թ.) կողմից հողամասի վրա 2011 թ-ին ինքնակամ կառուցված՝ ընդհանուր 65,9 ք/մ մակերեսով բնակելի տան և ընդհանուր 4.5 ք/մ մակերեսով պարիսպի նկատմամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

3.Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի սեփականության ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, Արթուր Հենրիկի Խաչատրյանի կողմից 06-019-0045-0009 ծածկագրով հողամասի վրա ինքնակամ կառուցված՝ ընդհանուր 65,9 ք/մ մակերեսով բնակելի տունը և ընդհանուր 4.5 ք/մ մակերեսով պարիսպը:

4.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր կոմիտե՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

27 դեկտեմբերի 2024
գ. Փամբակ